



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ASSEMBLYMAN ՄԱՅՔ ԿԱԹՈՅԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 16 Սեպտեմբերի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Զալիֆորնիոյ խորհրդարանի անդամ Մայք Կաթոյի, որ ներկայացուցիչն է 43րդ ընտրաշրջանի (կը տարածուի ՎԷՆ Նայսեն մինչեւ Պըրպէնք, Լոս Ֆելիզ եւ Սիլվըրլէյք ու շրջակայ ավանները): Ընդունելութեան ներկայ էին Ազգ. Վարչութեան ատենադպիր Տիար Լեւոն Կիրակոսեան եւ Կաթոյի անձնակազմի անդամներէն Զրիսթին Աղախանեան:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց Կաթոյի այցելութիւնը եւ անկէ լսեց իր ընտրական ծրագիրներուն եւ տարած աշխատանքներուն մասին: Խորհրդակցութիւնները կեդրոնացան յիշեալ ընտրաշրջանի եւ առհասարակ Զալիֆորնիոյ ժողովուրդին դիմագրաւած ընկերային ու տնտեսական հարցերուն վրայ. վեր առնուեցաւ այն պարագան, որ Կաթոյի ընտրաշրջանը ունի ըստ բաւականին խիտ հայ բնակչութիւն, որ, շրջանի այլ բնակիչներուն նման, ունի բազմերես ակնկալութիւններ իր պետական ներկայացուցիչներէն: Առաջնորդ Սրբազանը մաղթեց, որ հայ համայնքին հետ խորհրդարանականին յարաբերութիւնները զարգանան փոխադարձ յարգանքի ու գործակցութեան ամուր հիմերու վրայ:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց Կաթոյի:

PRELATE WELCOMES ASSEMBLYMAN MIKE GATTO

On Thursday, September 16th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Assemblyman Mike Gatto who represents California's 43rd Assembly District encompassing Burbank, Glendale, and a number of suburbs of Los Angeles. Executive Council member Mr. Levon Kirakosian joined the Prelate at the meeting, and Assemblyman Gatto was accompanied by staffer Ms. Christine Aghakhanian.

Assemblyman Gatto reported on the work he has carried out since being elected to the seat in June of this year, and also on future plans. The discussion centered on social and economic issues facing the people of

California, including the Armenian population, and given that the Assemblyman's district encompasses the largest concentration of Armenians in Southern California, the Prelate wished that relations and collaboration with the Armenian community remain strong and develop further.

At the conclusion of the meeting the Prelate presented the Assemblyman with a memento.